

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերի 5-ին, ժամը՝ 11:00-ին ք. ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» (ԵրՖԻ) հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող գույքերը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/
1	1	Հատուկ տեխնիկա՝ GAZ 71	տիպարը՝ ԴՏ-Մ ,թրթուտավոր բեռնափոխադրիչ, գույնը կանաչ, թող. տ/թ՝ 1983թ վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ խափանված,երկար ժամանակ չի շահագործվել, ենթակա է վերանորոգման	ք.Երևան, Ալիխանյան եղբայրների 2	1 730 000	1 730 000	86 500	22 640
2	2	Հատուկ տեխնիկա՝ GAZ 71	տիպարը՝ ԴՏ-Մ ,թրթուտավոր բեռնափոխադրիչ, գույնը կանաչ, թող. տ/թ՝ 1983թ վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ խափանված,երկար ժամանակ չի շահագործվել, շարժիչի վերևի հատվածը քանդած, ենթակա է վերանորոգման		1 600 000	1 600 000	80 000	22 250
3	3	Հատուկ տեխնիկա՝ УСБ25ДВ1661.33.10	տիպարը՝ անիվային ունիվերսալ տրակտոր, գույնը նարնջագույն վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ խափանված, ենթակա է վերանորոգման		1 200 000	1 200 000	60 000	21 050
4	4	Ամբարձիչ՝ БАЛКАНКАР ДВ 1661.33.10	գույնը դեղին, թող. տ/թ՝ 1987թ վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ հիդրավիկան, դեկը և այլ մասեր առկա չեն		720 000	720 000	36 000	16 250
5	5	Կցորդ՝ MAZ 9397	հաշվառման համարանիշ՝ 58-94 АП, գույնը կարմիր, թող. տ/թ՝ 1989թ. վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ անսարք, անիվների մի մասը բացակայում է, մյուս մասը հնամաշ		300 000	300 000	15 000	7 950
6	6	S/մ՝ IZH 2715-04	գույնը կանաչ, թող. տ/թ՝ 1989թ, հաշվառման համարանիշ՝ 546 SL 65, թափք՝ 353399 վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ խափանված, երկար ժամանակ չի շահագործվել, այլ գործոններ՝ կորոզիայի ենթարկված		280 000	280 000	14 000	7 450
7	7	S/մ՝ IZH 2715-101	գույնը կապույտ, թող. տ/թ՝ 1989թ, հաշվառման համարանիշ՝ 816 SL 65, թափք՝ 0072928 վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ անսարք, շարժիչը խափանված վիճակում, շատ այլ դետալներ բացակայում են, այլ գործոններ՝ առկա է միայն կմախքը		90 000	90 000	4 500	2 700
8	8	S/մ՝ MAZ 5549	հաշվառման համարանիշ 551 SL 65, հենասարք՝ 142498, գույնը կապույտ, թող. տ/թ՝ 1989թ. վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ խափանված,երկար ժամանակ չի շահագործվել, բեռնատարը ենթակա է վերանորոգման, այլ գործոններ արտաքինից անխնամ, կորոզիայի ենթարկված վիճակում		400 000	400 000	20 000	10 450
9	9	S/մ՝ MAZ 64229	հաշվառման համարանիշ՝ 839 SL 65, գույնը դեղին, թող. տ/թ՝ 1989թ, հենասարք՝ 0146 վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ խափանված,երկար ժամանակ չի շահագործվել, այլ գործոններ արտաքինից անխնամ, կորոզիայի ենթարկված վիճակում		940 000	940 000	47 000	19 550
10	10	UAZ 220601	հաշվառման համարանիշ 542 SL 65, թափք՝ 9400, գույնը սպիտակ, թող. տ/թ՝ 1988թ. վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ անսարք, բացակայում են դետալներ, ենթակա է վերանորոգման, այլ գործոններ՝ արտաքինից անխնամ, խորը կորոզիայի ենթարկված վիճակում		670 000	670 000	33 500	15 500
11	11	VAZ 2106	հաշվառման համարանիշ 438 АО 61, թափք՝ 197251, գույնը կանաչ, թող. տ/թ՝ 1986թ. վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ անսարք, այլ գործոններ՝ կորոզիայի ենթարկված, ենթակա է վերանորոգման		150 000	150 000	7 500	4 200
12	12	VAZ 2121	հաշվառման համարանիշ 243 SL 65, թափք՝ 0462586, գույնը սպիտակ, թող. տ/թ՝ 1985թ. վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ երկար ժամանակ չի շահագործվել, շահագործման ոչ պիտանի, այլ գործոններ՝ թափքը որոշ տեղերում կորոզիայի ենթարկված, ենթակա է վերանորոգման		400 000	400 000	20 000	10 450

13	13	VAZ 2121	հաշվառման համարանիշ 539 SL 65, թափք՝ 567386, թող. տ/թ՝ 1986, գույնը բեժ, կարմիր ներկած վիճակը ըստ գնահատման փաթեթի՝ առկա է միայն թափքը, այլ գործոններ՝ թափքը կորոզիայի ենթարկված և ծոմոված վիճակում	ք.Երևան, Ալիխանյան եղբայրների 2	80 000	80 000	4 000	2 450
----	----	----------	---	--	--------	--------	-------	-------

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գրքովելու վայրը՝ **«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):**

* **Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) մուծել են նախավճար և Կազմակերպչի կողմից ստացել մասնակցի վկայական (տոմս):**

* Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

* Յուրաքանչյուր հաջորդ լուրի աճուրդը սկսվում է նախորդ լուրի աճուրդն ավարտվելուց հետո:

• Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցողները լուրերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ **ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում, զանգահարելով Լևոն Ավետիսյանին՝ (077) 64-22-22 հեռախոսահամարով, յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-17:00: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լուրի (լուրեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:**

Աճուրդի մասնակցության պայմանները՝

- Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լուրի նկատմամբ կարող են ունենալ **սեփականության իրավունք**, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել **անհրաժեշտ փաստաթղթեր:**

Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- Ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ **անձնագրի պատճենը:**

- Իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը **և կանոնադրությունը,**

- Նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լուրի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ,** վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար՝** պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լուրի հերթական համարը: **Նախավճարը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում:**

- Մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լուրի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ,** վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար՝** պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լուրի հերթական համարը: **Մասնակցության վճարը գույքի (լուրի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:**

- Հայտարարուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

* **Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս):**

Աճուրդի մասնակցի չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- **Աճուրդին կարող են ներկա գրվել դիտորդներ՝ աճուրդի մասնակցի չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:**

- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Աճուրդի մասնակիցները և մասնակցի չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

- **Աճուրդի մասնակիցները և մասնակցի չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը:**

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը:

Ցանկացած մասնակցի իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

- Եթե մի քանի մասնակցի միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

- Լուրի (լուրերի) վաճառքից հետո աճուրդավարի կողմից հաղթող համարված մասնակիցը ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

Լուրի գնի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում՝ արձանագրության ստորագրման օրվանից սկսած 10 **օրվա** ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով:
- Աճուրդում հաղթող ճանաչված անձին փրվում է վճարման հանձնարարագիր, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման եթակա գումարի մեջ:
- Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:
- **Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:**
- Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

*** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Ջափյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63- 32, 043-06-07-16 հեռախոսահամարներով:**

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, եթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:
Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:
2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:
3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

***Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**